Աշխարհագրություն – 2025

I փուլ

Պատասխանների թերթիկ

Հարց	Պատասխան	Հարց	Պատասխան
1.	4	**11.**	+ 3° C
2.	2	**12.**	50 000 կմ²
3.	1	**13.**	2
4.	4	**14.**	3
5.	3	**15.**	2
6.	2	**16.**	2
7.	3	**17.**	1, 4, 6, 8
8.	2, 4, 6, 8	**18.**	1, 4, 6, 7
9.	2, 3, 5, 7	**19.**	3
10.	2	**20.**	3
21.	1. ճիշտ է 4. ճիշտ է 2. սխալ է 5. սխալ է 3. ճիշտ է 6. սխալ է	**22.**	1. ճիշտ է 4. ճիշտ է 2. ճիշտ է 5. սխալ է 3. սխալ է 6. սխալ է

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Դպրոցական օլիմպիադա – 2025թ.
Աշխարհագրություն – I փուլ
Տևողությունը՝ 120 րոպե
Գնահատման քայլը՝ 0,5 միավոր

Առաջադրանքներ

1. Ո՞ր շարքում տրված լեռնագագաթներն ունեն հրաբխային ծագում……..0,5 միավոր
   1) Գոմշասար, Ուրծ, Առնոս
   2) Մարութա, Ջիլո, Կապուտջուղ
   3) Թեժլեռ, Սուկավետ, Մուրղուզ
   4) Ծղուկ, Աչքասար, Սիփան

2. Զբոսաշրջությամբ առավել առաջատար երկրներ են……..……... 0,5
   1) Իրանը և Սիրիան
   2) Ֆրանսիան և Իսպանիան
   3) Կանադան և Պերուն
   4) Չինաստանը և Վիետնամը

3. 200 մլն-ից պակաս բնակչություն ունի.....…….… 0,5
   1) Բանգլադեշը 2) ԱՄՆ-ը 3) Ինդոնեզիան 4) Հնդկաստանը

4. Եթե քարտեզի անվանական մասշտաբը 1սմ-ում 500 կմ է,
   ապա դրա թվային մասշտաբը կլինի…….…0,5
   1) 1 : 50 000 2) 1 : 500 000 3) 1 : 5 000 000 4) 1 : 50 000 000

5. Ո՞ր շարքի քաղաքներն են մայրաքաղաքներ…….….0,5
   1) Մադրիդ, Միլան, Աթենք
   2) Թուրին, Բարսելոն, Բելգրադ
   3) Զագրեբ, Հռոմ, Կարակաս
   4) Տիրանա, Նեապոլ, Սիդնեյ

6. Բևեռային շրջագծերի վրա բևեռային ցերեկների տևողությունը……....0,5
   1) 1 ամիս է 2) 1 օր է 3) 6 ամիս է 4) 1 շաբաթ է

7. Եվրոպեոիդ և մոնղոլոիդ մեծ ռասաների խառնածինները կոչվում են…….…0,5
   1) սամբոներ 2) մուլատներ 3) մետիսներ 4) եթովպացիներ

8. Դուրս գրել այն երկրների համարները, որոնք ելք չունեն դեպի ծով
   կամ օվկիանոս…….....…2,0
   1) Գերմանիա 2) Մոնղոլիա 3) Նամիբիա 4) Բոլիվիա
   5) Պակիստան 6) Ուզբեկստան 7) Ուկրաինա 8) Աֆղանստան

9. Դուրս գրել ջրային այն էլեկտրակայանների համարները, որոնք չեն
   մտնում Սևան – Հրազդան կասկադի մեջ…….……...……...…….…….2,0
   1) Քանաքեռի 2) Տաթևի 3) Զորագետի 4) Արզելի
   5) Շամբի 6) Արզնու 7) Սպանդարյանի 8) Հրազդանի

10. Ո՞ր հողատիպն է բնորոշ սավանայի բնական զոնային……0,5
    1) լատերիտային 2) կարմրագորշ 3) պոդզոլային 4) սևահողային

11. Երևան քաղաքում օրվա ընթացքում 8 անգամ չափել են
    օդի ջերմաստիճանները: Այդ ցուցանիշներն են՝
    -1 ˚C, -2 ˚C , -4 ˚C , -1 ˚C , +7 ˚C, +13 ˚C, +11 ˚C , +1 ˚C
    Որոշել օդի օրական միջին ջերմաստիճանը…….....…….……..1,0

12. Երկրի բնակչության խտությունը 40 մարդ/կմ² է, իսկ բնակչության թիվը՝ 2 մլն մարդ: Որոշել երկրի տարածքը……...............………….…...................................….……….…..1,0

13. Ժամային գոտիների վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.………..........………..……………..……..0,5

1) Օրվա նույն ժամը կարող է լինել միայն նույն զուգահեռականի վրա:
2) Դելիի գոտիական ժամանակն առաջ է Երևանի գոտիական ժամանակից:
3) Տվյալ պահին տվյալ միջօրեականի վրա դիտված ժամանակը կոչվում է գոտիական ժամանակ:
4) Գլխավոր միջօրեականով է անցնում ամսաթվի փոփոխման գիծը:

14. Ո՞ն պնդումն է սխալ………………………………………………………………………….….0,5

1) Զարգացած երկրների արդյունաբերության առաջատար ճյուղերից է մեքենաշինությունը:
2) Աֆրիկայի երկրների մեծ մասում տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է:
3) Ներկայումս համաշխարհային արդյունաբերության առավել արագ զարգացող ճյուղը մետաղաձուլությունն է:
4) Ներկայումս համաշխարհային տնտեսության կառուցվածքում աստիճանաբար նվազում է գյուղատնտեսության բաժինը:

15. Ո՞րն է բնության բաղադրիչների ճիշտ զուգորդությունը………………………………………………..0,5

1) Անապատ – սևահող – օշինդր, ուղտափուշ
2) Տայգա – պոդզոլային հող – եղևնի, սոճի
3) Տունդրա – կմախքային հող – լորենի, հացենի
4) Տափաստան – մոխրագույն հող – փետրախոտ, սիզախոտ

16. Բնական գազի հանույթով առաջատար երկրներ են………………………………..…………………0,5

1) Ֆրանսիան և Ճապոնիան
2) Իրանը և Նիդերլանդները
3) Թուրքիան և Հունաստանը
4) Լեհաստանը և Իսպանիան

17. Գրել այն ապարների համարները, որոնք ունեն անօրգանական նստվածքային ծագում……………………………………………………………………………………2,0

1) խճաքար 2) տորֆ 3) գրանիտ 4) ավազ
5) մարմար 6) կավ 7) գնեյս 8) կերակրի աղ

18. Գրել այն բնակավայրերի համարները, որոնք երկաթուղային կայարաններ չեն……..…………:……2,0

1) Գորիս 2) Մարալիկ 3) Սոթք 4) Վաղարշապատ
5) Արարատ 6) Տաշիր 7) Մարտունի 8) Աբովյան

19. Բնածին աղտոտիչ է (են)……………………………………………………………………………0,5

1) կենցաղային թափոնները
2) պլաստմասսան
3) հրաբխի ժայթքումը
4) աղմուկը

20. Ո՞ր բնական ռեսուրսն է անսպառ……………………………………………………………...…0,5

1) հանքային 2) հողային 3) կլիմայական 4) անտառային

21. Իրանի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ……………………...……………………………………………………...……………..1,5

1) Աչքի է ընկնում բնակչության բարձր բնական աճով:
2) Աշխարհի առավել միատարր ազգային կազմ ունեցող երկրներից է:
3) Բնակչության թվով առաջինն է Հարավ-արևմտյան Ասիայում:
4) Ազգային փոքրամասնություններից առավել մեծ թիվ են կազմում ադրբեջանցիները և քրդերը:
5) Հավատացյալ բնակչության գերակշիռ մասը դավանում է մահմեդականության սուննի ուղղությունը:
6) Բնակչության տարիքային կազմում մեծ կշիռ ունեն հետաշխատունակ տարիքի բնակիչները:

22. ՀՀ մակերևույթի վերաբերյալ տրված պնդումներից
որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ……..……1,5

1) Ծալքաբեկորավոր ծագման ՀՀ ամենաբարձր գագաթը Կապուտջուղն է:
2) Ծղուկ և Իշխանասար գագաթները գտնվում են Սյունիքի բարձրավանդակում:
3) Փամբակի և Ծաղկունյաց լեռներն արտաքին շարի լեռներ են:
4) Եղնախաղի լեռնավահանը ձգվում է ՀՀ-ի և Թուրքիայի պետական սահմանի ուղղությամբ:
5) Սևանա լիճը եզրավորված է Գեղամա և Վարդենիսի ծալքաբեկորավոր լեռնաշղթաներով:
6) Պուշկինի լեռնանցքը գտնվում է Փամբակի լեռնաշղթայի վրա:

Սիրելի՛ աշակերտներ.

Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Եթե ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքին անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ: Խնդիրների պատասխանները ստացեք լուծելով: Դրանք գրե՛ք սևագրության մեջ և հետո արտագրեք պատասխանների թերթիկում: Պատասխանները կարող եք գրել հենց առաջադրանքի վրա, և ստուգելուց հետո արտագրե՛ք պատասխանների թերթիկում:

Մաղթու՛մ ենք հաջողություն

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ **Ա.Թ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**